ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

FACTOR TV 2026

RA, Yerevan, 12 Saryan str.
E-mail: info@factor.am
Web: www.factor.am
© All Rights Reserved

1. ՆՊԱՏԱԿ ՈՒ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Այս ուղեցույցը սահմանում է փաստերի ստուգման (fact-checking) աշխատանքների միասնական կանոններ՝ հիմնված միջազգային ճանաչված չափանիշների վրա (մասնավորապես՝ International Fact-Checking Network-ի, European Fact-Checking Standards Network-ի, Poynter Institute-ի սկզբունքներ): Այն նպատակ ունի ապահովել հրապարակումների ճշգրտությունը, թափանցիկությունը, անաչառությունը և հանրային վստահությունը:

2. ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Անաչառություն և անկողմնակալություն

- Փաստերի ստուգումը կատարվում է առանց քաղաքական, գաղափարական կամ ֆինանսական կողմնակալության,
- Նույն չափանիշները կիրառվում են բոլոր կողմերի նկատմամբ,
- Փաստերի ստուգումը չի պարունակում կարծիք կամ գնահատական՝ բացի փաստական եզրակացությունից

2. Աղբյուրների թափանցիկություն և հասանելիություն

- Նշվում են բոլոր օգտագործված աղբյուրները
- Նախապատվությունը տրվում է առաջնային և բաց հասանելի աղբյուրներին, միայն դրանց բացակայության դեպքում՝ կրկնօրինակներին կամ վերահրապարակումներին՝ համապատասխան նշումով,
- Ընթերցողը պետք է կարողանա ինքնուրույն վերաստուգել ներկայացված տվյալները

3. Մեթոդաբանության թափանցիկություն

- Պարզ և հասկանալի ներկայացվում է՝ ինչն է ստուգվել և ինչպես,
- Նշվում են ստուգման սահմանափակումները (եթե առկա են),
- Մեկնաբանվում է տվյալների ընտրության տրամաբանությունը

4. Սխալների բաց և արագ շտկում

- Սխալների ուղղումը կատարվում է վերստուգումից հետո, առանց ուշացման,
- Շտկումները կամ պարզաբանումները հստակ նշվում են հրապարակման մեջ,
- Պահպանվում է նախնական բովանդակության պատմությունը

3. ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

Պնդումների ընտրություն

- Պնդումը պետք է լինի ստուգելի,
- Պնդումը պետք է ունենա հանրային նշանակություն,
- Պնդումը պետք է ունենա որոշակի տարածվածություն կամ դրա պոտենցիալ,
- Առանձին դեպքերում կարող են ստուգվել պնդումներ, որոնք դեռ չունեն մեծ տարածում, բայց հետագա տարածման դեպքում կարող են զգալի վտանգ ներկայացնել:

Փաստերի ստուգման ենթակա են.

- Հանրային պաշտոնյաների և քաղաքական գործիչների փաստական պնդումները,
- Օրենքների, քաղաքականությունների և ծրագրերի վերաբերյալ պնդումները,
- Թվային տվյալներ, վիճակագրություն և գրաֆիկներ,
- Սոցիալական մեդիայում լայն տարածում ստացած և / կամ հանրային վտանգ ներկայացնող պնդումները

Ինչը չի ստուգվում

- Արժեքային դատողություններ և կարծիքներ,
- Կանխատեսումներ, որոնք չեն ներկայացվում որպես փաստ,
- Սատիրա կամ հստակ հումորային բովանդակություն (եթե դա ակնհայտ է)

Ստուգման ստանդարտ գործընթաց

1. Պնդման ընտրություն,
2. Պնդման ճշգրտում – հստակ սահմանել՝ ինչ փաստական տարր է ստուգվում,
3. Տվյալների,պատկերների և այլ ինֆորմացիայի հավաքագրում – առաջնային աղբյուրների որոնում,
4. Համեմատություն և վերլուծություն – տվյալների և հավաքված այլ նյութերի համադրում և հակասությունների բացահայտում,
5. Եզրակացության ձևակերպում – հիմնված բացառապես փաստերի վրա,
6. Խմբագրական վերահսկում – երկրորդ ստուգում խմբագրի կողմից

Աղբյուրների գնահատում

Առաջնային աղբյուրներ

- Օրենքներ, նորմատիվ ակտեր, դատական որոշումներ,
- Պաշտոնական վիճակագրական ծառայություններ,
- Միջազգային կազմակերպություններ (ՄԱԿ, ԱՀԿ, ԵՄ և այլն),
- Արբանյակային լուսանկարներ, քարտեզներ

Երկրորդային աղբյուրներ

- Վստահելի տեղական և միջազգային լրատվամիջոցներ,
- Գիտական և ակադեմիական հրապարակումներ,
- Միջազգային առևտրի, ուղևորափոխադրման, բեռնափոխադրման և այլ թեմաներով ճանաչված տվյալների հավաքածուներ

Անթույլատրելի աղբուրներ

Անանուն աղբյուրների տվյալները չեն օգտագործվում փաստերի ստուգման նյութերում

Էթիկական և իրավական չափանիշներ

- Պահպանվում է անմեղության կանխավարկածը,
- Չի խախտվում անձնական տվյալների պաշտպանությունը,
- Չի տարածվում ատելության խոսք կամ խտրական բովանդակություն